

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-20/9-1

ք. Երևան

«15» սեպտեմբերի 2020թ.

Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեն (այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս կոմիտեի գլխավոր քարտուղար Ա. Մկրտչյանի որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և ՀՀԱՐՍԵՎ-ը՝ ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կապալառու), ի դեմս տնօրեն Պ. Դանիելյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից (Երկուսը միասին՝ այսուհետ՝ Կողմեր), կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր) հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել պայմանագրի N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված ՀՀ Գեղարքունիքի մարզի գ. Լեռնահովիտի դպրոցի տիպային (մոդուլային) շենքի կառուցման աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են շինարարական աշխատանքների տեխնիկական և հեղինակային հսկողության ծառայությունների մատուցման պայմանագրերն ուժի մեջ մտնելուց հետո և աշխատանքների ողջ ծավալով կատարման ժամկետ է սահմանվում 420 օրացուցային օրը:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 3):

1.4 Պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված աշխատանքների կատարման ժամկետների մեջ չեն հաշվարկվում

1.4.1 հեղինակային և/կամ տեխնիկական հսկողության պայմանագրերի լուծման դեպքում՝ պայմանագրերի լուծման օրվանից մինչև նոր պայմանագրերի կնքման հաջորդող օրերի քանակը,

1.4.2 հեղինակային հսկողություն իրականացնող կազմակերպության կողմից համապատասխան եզրակացության դեպքում՝ եզրակացության մեջ նշված օրերի քանակը:

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար.

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները:

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով:

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով:

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին:

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք:

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքներն ամբողջությամբ կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Ապահովել պայմանագրի N 5 Հավելվածում (Աղյուսակներ N 1 և N 2) ներկայացված կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործվելիք նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները:

3.4.10 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Կողմերի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Կողմերի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 օրացուցային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար:

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում:

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ:

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում:

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարածամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Պայմանագրի ընդհանուր գինը կազմում է **576 000 000 (հինգ հարյուր յոթանասունվեց միլիոն) ՀՀ դրամ**, որից 96 000 000 (իննսունվեց միլիոն) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.1.1 Պատվիրատուն պայմանագրի ընդհանուր գնից մինչև 25%-ի չափով կարող է փոխանցել Կապալառուի բանկային հաշվին՝ որպես կանխավճար՝ բանկային երաշխիքի առկայության դեպքում՝ Կանխավճարի չափը և տրամադրման ժամկետները որոշվում են Կապալառուի կողմից կատարման ենթակա աշխատանքների ու ձեռքբերվող նյութերի (այդ թվում սարքերի) ժամկետների վերաբերյալ Պատվիրատուին ներկայացվող գրավոր տեղեկատվության (հիմնավորման) առկայության դեպքում:

Կանխավճարի մարումն իրականացվում է հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով: Ընդ որում մինչև կանխավճարի ամբողջական մարումը, Կապալառուին վճարումներ չեն կատարվում:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով՝ նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,1 (զրո ամբողջ մեկ տասնորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 1 (մեկ) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում

¹ Վճարման ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,1 (զրո ամբողջ մեկ տասնորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արիեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Աշխատանքի կատարման ընդհանուր ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի ձեռքբերման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ընդհանուր ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ընդհանուր ժամկետը (420 օրացուցային օր) կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով (անհրաժեշտության դեպքում բանկային երաշխիքների ձևով ներկայացրած ապահովումների ժամկետների երկարաձգումը հավաստող փաստաթղթերի առկայությամբ):

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով. Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է 7 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 3, N 4, N 4 1 և N 5 հավելվածները համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.13 Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի տասնապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կապալառուի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում են բանկային երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները. Ընդ որում, Կապալառուն համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում. Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:


8.14 Որակավորման ապահովման գումարը նվազեցվում է, եթե առկա են ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 26-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝

ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ
ՀՎՀՀ 02565827

Գլխավոր քարտուղար




(ստորագրություն)

ԿԱՊԱԼԱՌՈՒ՝

«ԱՐՍԵՎ» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Ավան Դուրյան 352, 40րն
«Հայֆինանս» ՓԲԸ
Հ/Հ 11500548625986
ՀՎՀՀ 08617407

Տնօրեն՝



Պ. Դանիելյան
(ստորագրություն)

4 S



ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՐԱՇԻՎ*

ՀՀ Ձեռարքունիքի մարզի գ. Լեռնահովիտի դպրոցի տիպային (մոդուլային) շենքի կառուցման աշխատանքների կատարման

Հ/Հ	Աշխատանքների անվանումը	Չափման միավոր	Քանակ	Միավորի արժեքը	Ընդամենը
1	2	3	4	5	6
1. Համառոտագրարարական աշխատանքներ					
Հողային աշխատանքներ					
1	III-րդ կարգի գրունտների քանդում փոստրակում 0 մմ3 շերտի տարողությամբ էքսկավատորով կողից	խմ	1872	748 33	1400873 36
2	Նույնը խրամուղիներում	խմ	226	748 33	169122 53
3	Փոստրակի հատակի և կողերի վերջնական հարթեցում ձեռքով	խմ	60	2494.43	149665 96
4	Զեոլիցքի համար աստիճանավոր գրունտի մշակում հանքավայրում էքսկավատորով. բարձրով ավտոմեքանիկայի վրա	խմ	917	748 33	686218 42
5	Նույնի տեղափոխում 3կմ հեռավորության վրա	խմ	917	1097 55	1006453 68
6	Գրունտի ետիցք հատակների տակ բուլդոզերով	խմ	2925	69 84	204294 03
7	Գրունտի աստիճանաբար տոփանում օդաճնշական ձեռքի տոփանիչով	խմ	2925	199 55	583697 23
8	Գրունտի ետիցք հիմքերի ծոց ձեռքով. տոփանումով	խմ	150	997 77	149665 96
Ընդամենի հողային աշխատանքներ					4349991.17
Ե/բետոնե կոնստրուկցիաներ 0,00 կմ²ից ցածր					
9	Բետոնե նախապատրաստական շերտի պատրաստում հիմքերի տակ B -7,5 դասի բետոնով	խմ	47 8	36917 60	1764661 42
10	Խամբարաբետոնե նախապատրաստական շերտի պատրաստում B- 7 5 դասի բետոնով	խմ	349	36917 60	12884243 40
11	Բետոնե ժապավենային հիմքերի պատրաստում B-7,5 դասի բետոնով	խմ	35 4	36917 60	1306883 14
12	Խամբարաբետոնե ժապավենային հիմքերի պատրաստում B- 7 5 դասի բետոնով	խմ	8 3	41906 47	347823 69
13	Շրջանակների միաձույլ ե/բետոնե հիմային հեծանների պատրաստում B-20 դասի բետոնով	խմ	287 95	66850 79	19249686 23
14	Ամրան Փ8A240C	տն	7 121	334253 97	2380222 53
15	Ամրան Փ16A500C	տն	5 572	334253 97	1862563 41
16	Ամրան Փ18A500C	տն	4 442	334253 97	1484622 44
17	Ամրան Փ25A500C	տն	0 115	334253 97	38506 06
18	Շրջանակների միաձույլ ե/բետոնե սյուների պատրաստում B-20 դասի բետոնով	խմ	5 1	82815 16	422357 33
19	Ամրան Փ8A240C	տն	0 510	334253 97	170469 53
20	Ամրան Փ22A500C	տն	1 742	334253 97	582270 42
21	Պողպատե թերթից վրադիրների տեղադրում 16մմ հաստ.	տն	0 232	648552 48	150529 03
22	Միաձույլ ե/բետոնե պատերի պատրաստում 350մմ հաստ B-20 դասի բետոնով	խմ	169 65	79821 84	13541775 84
23	Ամրան Փ6, 8A240C	տն	1 452	334253 97	485370 19
24	Ամրան Փ10A500C	տն	2 599	334253 97	868726 07
25	Ամրան Փ12A500C	տն	8 407	334253 97	2810039 72
26	Ամրան Փ16A500C	տն	0 431	334253 97	143929 76
27	Ամրան Փ22A500C	տն	1.325	334253 97	443020 21
28	Պողպատե թերթից վրադիրների տեղադրում 16մմ հաստ.	տն	0 238	648552 48	154031 21
Ընդամենը ե/բետոնե կոնստրուկցիաներ 0,00 կմ²ից ցածր					61091731.63
Ե/բետոնե կոնստրուկցիաներ 0,00 կմ²ից բարձր					
29	Շրջանակների միաձույլ ե/բետոնե սյուների պատրաստում B-20 դասի բետոնով	խմ	59.5	91795 12	5461809 68
30	Ամրան Փ8A240C	տն	2 341	334253 97	782485 21
31	Ամրան Փ16. Փ18A500C	տն	0 050	334253 97	16812 97
32	Ամրան Փ22A500C	տն	6 940	334253 97	2319689.14
33	Պողպատե թերթից վրադիրների տեղադրում 16մմ հաստ.	տն	0 010	648552 48	6744 95
34	Շրջանակների միաձույլ ե/բետոնե սիջուկների պատրաստում B-20 դասի բետոնով	խմ	0 5	74832 98	37416 49



35	Ամրան Փ8A240C	տն	0 023	334253 97	7821 54
36	Ամրան Փ16, Փ18A500C	տն	0,051	334253 97	17113 80
37	Շոքակների միաձույլ ե/բ պարզունակների պատրաստում մինչև 500մմ բարձրությամբ B-20 դասի բետոնով	խմ	10.20	82815 16	844714 66
38	Նույնը, մինչև 800մմ բարձրությամբ B-20 դասի բետոնով	խմ	123 42	82815.16	10221047 44
39	Ամրան Փ6, 8A240	տն	3 220	334253 97	1076448 20
40	Ամրան Փ8A500C	տն	0.643	334253 97	214825 03
41	Ամրան Փ12A500C	տն	1 797	334253.97	600707 87
42	Ամրան Փ16A500C	տն	1 497	334253 97	500211 07
43	Ամրան Փ18A500C	տն	4 019	334253 97	1343400 14
44	Ամրան Փ25A500C	տն	0.092	334253 97	30818 22
45	Ամրան Փ28A500C	տն	0 744	334253 97	248651 53
46	Պողպատե թերթից ներդիրների տեղադրում	տն	0.190	648552.48	123224 97
47	Միաձույլ ե/բ գոտիների պատրաստում B-20 դասի բետոնով	խմ	23 14	75830 75	1754723 60
48	Ամրան Փ6, 8A240	տն	0 534	334253 97	178625 32
49	Ամրան Փ12A500C	տն	1 357	334253 97	453448 94
50	Ամրան Փ18A500C	տն	0 149	334253 97	49736 99
51	Ղիաֆրազմաների պատրաստում 200մմ հաստության սևամեջ բետոնե բլոկներով	խմ	149 4	25942 10	3875542 10
52	Նույնի բետոնացում, B-20 դասի բետոնով, ամրանավորումով	խմ	95 53	41906 47	4003324 90
53	Ամրան Փ6, 8A240C	տն	0 724	334253 97	242090 12
54	Ամրան Փ10A500C	տն	8 657	334253 97	2893770.34
55	Ամրան Փ12A500C	տն	7 041	334253.97	2353348 51
56	Ամրան Փ16A500C	տն	1 002	334253 97	334788 78
57	Միաձույլ ե/բ բարավորների պատրաստում B-12,5 դասի բետոնով	խմ	1.63	82815 16	134988 72
58	Ամրան Փ6A240	տն	0 051	334253 97	17046 95
59	Ամրան Փ12A500C	տն	0 221	334253 97	73870 13
60	Միաձույլ ե/բետոնե ծածկի սալերի պատրաստում +3.3նիշի վրա B-20դասի բետոնով	խմ	186 5	79821 84	14886773 91
61	Ամրան Փ6,8A240	տն	0 357	334253 97	119261 82
62	Ամրան Փ12A500C	տն	16 051	334253 97	5365210 78
63	Ամրան Փ14A500C	տն	5 701	334253 97	1905682 17
64	Ամրան Փ18A500C	տն	0.026	334253.97	8556 90
65	Միաձույլ ե/բ հեծանների պատրաստում B-20 դասի բետոնով	խմ	6 80	81817 39	556358 25
66	Ամրան Փ8A240	տն	0 184	334253 97	61369 03
67	Ամրան Փ18A500C	տն	0 367	334253 97	122738 06
68	Միաձույլ ե/բ հովիարի պատրաստում +2.7նիշում B-20դասի բետոնով (սալ ՄՍ-1, +հեծան ՄՅ-1)	խմ	1 7	77826 30	132304 71
69	Ամրան Փ8A240	տն	0.029	334253 97	9593 09
70	Ամրան Փ8A500C	տն	0 073	334253 97	24333 69
71	Ամրան Փ12A500C	տն	0 008	334253 97	2674 03
72	Ամրան Փ16A500C	տն	0.046	334253 97	15375 68
73	Ամրան Փ18A500C	տն	0.015	334253 97	5013 81
74	Բետոնե աստիճանների պատրաստում 0.00 նիշից դեպի +0.45նիշ B-7.5 դասի բետոնով	խմ	2 3	89799 57	206539 02
75	ՄՍ-1 Աստիճանի միաձույլ ե/բետոնե սալի պատրաստում B-20 դասի բետոնով (+0.45նիշից դեպի +3 3նիշ)	խմ	1 9	89799 57	170619 19
76	Նույնի, բետոնե աստիճանների պատրաստում B-7.5 դասի բետոնով	խմ	0 5	334253 97	167126 99
77	Ամրան Փ8A240	տն	0 055	334253 97	18283 69
78	Ամրան Փ16A500C	տն	0 274	334253 97	91552 16
Ընդամենը Ե/բետոնե կոնստրուկցիաներ 0,00 նիշից բարձր					64088615.27
Միջնորմներ					
79	Միջնորմների շարում 100մմ հաստ սևամեջ բետոնե բլոկներով (ամրանավորումով)	քմ	397 58	3891 31	1547108 98
80	Միջնորմների շարում 200մմ հաստության սևամեջ բետոնե բլոկներով	խմ	110 8	25742 54	2851501 68
81	Ամրան Փ8A500C	տն	2 760	334253 97	922401 24
Ընդամենը միջնորմներ					5324011.90
Ղոներ և պատուհաններ					
82	Ղոներ, պատուհաններ Այլումինե, ապակեփաթեթով, ջերմակամուրջով, մուգ մոխրագույն արտաին ղոներ	քմ	36 31	82815 16	3006819 82
83	Այլումինե, ապակեփաթեթով, ջերմակամուրջով, մուգ մոխրագույն, V-5 արտաքին վիտրաժի բացվող մաս(ղուռ)	քմ	1 92	82815.16	159005 11
84	Այլումինե, ապակեփաթեթով, ջերմակամուրջով, մուգ մոխրագույն, V-4 արտաքին վիտրաժի բացվող մաս (պատուհան)	քմ	1 20	82815 16	99378 20

85	Այրումինե, ապակեփաթեթով, ջերմակամուրջով, մուգ մոխրագույն, V-3-- V-5 արտաքին վիտրամների չբացվող (խուլ) մաս	քմ	17 04	74832 98	1275153 96
86	Մետաղապլաստե, 1շերտ 4մմ հաստ ապակիով V-1 ներքին վիտրամի բացվող մաս (դուռ)	քմ	2.30	34922 06	80460 42
87	Մետաղապլաստե, 1շերտ 4մմ հաստ ապակիով V-1 ներքին վիտրամի չբացվող (խուլ) մաս և V-2 խուլ վիտրամ	քմ	25.0	24944 33	624356 49
88	Շտրիտ, անհատական, սիլիկոնե սեպակեղանով, բնական շրջանակը ջրակայուն շերտով փայտից, միջուկը պենոպոլիստիկով, երեսապատման շերտը 1.5մմ հաստությամբ	հատ	9	67848 57	610637 11
89	Ներքին, խուլ, մուգ մոխրագույն մեկփեղկանի դռներ՝ շրջանակը ջրակայուն շերտով փայտից, միջուկը պենոպոլիստիկով, երեսապատման շերտը 1.5մմ հաստությամբ ՊՎԷ Դ2---Դ3	հատ	41	67848 57	2781791 26
90	Ներքին երկփեղկանի դռներ (маятник петля) շրջանակը ջրակայուն շերտով փայտից, միջուկը պենոպոլիստիկով, երեսապատման շերտը 1.5մմ հաստությամբ ՊՎԷ Դ4---Դ4*	հատ	4	67848 57	271394.27
91	Մետաղական, խուլ, մուգ մոխրագույն դռան տեղադրում Դ-5	քմ	1 7	34922 06	59381 47
92	Մետաղական դռան երկշերտ յուղաներկում, Նախնական մշակումով ԴՓ-021 Նախաներկով	քմ	3 4	1297 10	4410 16
93	Մետաղապլաստե ներքին դռներ Դ-6	քմ	5 3	34922 06	183438 58
94	Սանհանգույցի էկրանների տեղադրում	քմ	12 6	19955 46	251438 81
95	Մետաղապլաստե, ապակեփաթեթով, մուգ մոխրագույն բացվող պատուհաններ	քմ	89 3	34922 06	3118888 89
96	Մետաղապլաստե, ապակեփաթեթով մուգ մոխրագույն չբացվող պատուհաններ	քմ	64 2	24944 33	1600727 30
97	Մետաղապլաստե, բաց մոխրագույն, պատուհանագոգերի տեղադրում 200մմ լայնությամբ	գծմ	80 1	3492 21	279585 99
ՇՆՈՒՄՆԵՐ ԴՐՈՒՆ և պատուհաններ					14406867.82
Ջանիտներ					
98	Ջողի տոփանում խճաքարով	քմ	1480	399 11	590681 65
99	Ամրանավորված բետոնե շերտ 150մմ հաստությամբ B-12.5 դասի բետոնից	խմ	222.0	39910 92	8860224 68
100	Նույնի ամրանավորում Փ10A500C դասի ամրանային ցանցով (8.3կգ/քմ)	տն	12.3	334253 97	4105975.79
101	Խարամաբետոն 45մմ հաստ B-12.5դասի թեթև բետոնով	քմ	1644.6	1795 99	2953615 77
102	Ջրամեկուսիչ շերտի պատրաստում իզոլից 1 շերտ բիտումի մածիկի վրա	քմ	1447.8	1297 10	1877922 63
103	Ցեմենտ-ավազե հարթեցնող շերտ 25մմ հաստ	քմ	540 46	2195 10	1186364 13
104	Ցեմենտ-ավազե հարթեցնող շերտ 30մմ հաստ	քմ	1104.1	2294 88	2533774 82
105	Մամլագրանիտե (նվազագույնը 10մմ հաստությամբ) սալերով հատակի երեսապատում, սոսնձումով	քմ	417 12	12971 05	5410484 23
106	Մամլագրանիտե (նվազագույնը 10մմ հաստությամբ) սալերով աստիճանների երեսապատում	քմ	16 71	16962.14	283437 39
107	Նույնի, ցեմենտ-ավազե հարթեցնող շերտ 25մմ հաստ	քմ	16 71	2195 10	36680 13
108	Շրիշակների իրականացում 10սմ բարձրությամբ մամլագրանիտե սալերով	գծմ	171 8	1496 66	257126 12
109	Խեցեսալերով (նվազագույնը 8մմ հաստ) հատակի երեսապատում, սոսնձումով	քմ	123 34	10975 50	1353718 61
110	Նույնի շրիշակների իրականացում 10սմ բարձրությամբ	գծմ	80 1	1197 33	95893 97
111	Վինիլային (հետերոգեն ՊՎԷ 2մմ հաստ, 0.7մմ հաստ պաշտպանիչ շերտով) ծածկույթի իրականացում, ինքնահարթեցվող շերտի պատրաստումով և սոսնձումով (ծավալը իր մեջ ընդգրկում է h=80մմ շրիշակների մակերեսը)	քմ	768 453	12971 05	9967639 42
112	Վինիլային (հետերոգեն սպորտային ՊՎԷ 4 5մմ հաստ 1մմ հաստ հովոգեն պաշտպանիչ շերտով) ծածկույթի իրականացում, ինքնահարթեցվող շերտի պատրաստումով և սոսնձումով (ծավալը իր մեջ ընդգրկում է h=100մմ շրիշակների մակերեսը)	քմ	257 435	17461 03	4495083 33
113	Կամրոլիկից (4.5մմ հաստ պաշտպանիչ շերտով) ծածկույթի իրականացում, ինքնահարթեցվող շերտի պատրաստումով և սոսնձումով (ծավալը իր մեջ ընդգրկում է h=80մմ շրիշակների մակերեսը)	քմ	116 8	3791 54	442851 59
114	Ցեմենտե հատակների պատրաստում 30մմ հաստ (շրիշակների պատրաստումով)	քմ	34 32	2195 10	75335 86
ՇՆՈՒՄՆԵՐ հատակներ					44526810.11
Տանիք					
115	Ֆ-1 Մետաղական ֆերմաների մոնտաժում պողպատե քառանկյուն խողովակներից	տն	3 681	858084 82	3158438 62
116	ՆԷ-6 կցորդային վրադիրների եռակցում (պողպատե թերթ 250x250x10մմ, ամրան Փ12A500C)	տն	0 181	858084 82	155224 11
117	Մետաղական ֆերմաների կապերի մոնտաժում ուղղանկյուն պողպատե խողովակներից	տն	6 616	858084 82	5677089 19

118	ՆԷ-7---ՆԷ-10 կցորդային վրադիրների եռակցում (պողպատե թերթ 8մմ հաստ, ամրան Փ12A500C)	տն	0 196	858084 82	167988 98
119	Տանկիքի մետաղական կոնստրուկցիաների մոնտաժում պողպատե ուղղանկյուն խողովակներից (սյուներ, պարզունակներ)	տն	16 043	858084 82	13766254 82
120	ՆԷ-7---ՆԷ-10 կցորդային վրադիրների եռակցում (պողպատե թերթ, անկյունակ, ամրան Փ8A500C)	տն	1 137	858084 82	975216 83
121	Մետաղական տարրերի երկշերտ ներկում ՈՓ-115 էմալով, նախնական մշակումով ԴՓ-021 նախաներկով	տն	27 853	54877 52	1528501 97
122	Մետաղական մակերեսների պատում հրդեհակայուն ներկով	քմ	1182 7	1995 55	2360167 54
123	Տանկիքի փայտյա կոնստրուկցիաների տեղադրում մշակված հակասեպտիկ կոպոլիմերով (ծպեղ, կավարամած)	խմ	30 9	234476 67	7245329 00
124	Նույնի երեսում (տակից) ОСП - սալերով (оринетированно-стружечная плита) 10մմ հաստ	քմ	1540 1	5787 08	8912687 59
125	Գոյորշամեկուսիչ շերտի փռում	քմ	1540 1	1795 99	2766006 49
126	Ձերմամեկուսիչ շերտի իրականացում 100 մմ հաստ երկշերտ (վերին շերտը 15մմ, ստորինը՝ 85մմ հաստ) չայրվող բազալտե հանքաքարային սալերով	քմ	1540 1	5487 75	8451686 51
127	ОСП սալերի տեղադրում 10մմ հաստ (բիտումային կղմիտորի հիմնատակ)	քմ	1781 1	5787 08	10307374 76
128	Բիտումային կղմիտորից ծածկույթի իրականացում (մոդիֆիկացված բիտում 1.3կգ/քմ պարունակությամբ, երաշխիքային ժամկետը՝ 40տարի)	քմ	1781 1	7782 63	13861641 92
129	Փայտե կոնստրուկցիաների հրապաշտպանում	խմ	30 9	9478 84	292896.28
130	ОСП սալի մասնակի լաքնապատում	քմ	297 2	1197 33	355821 83
131	Ջրհորղանների պատրաստում 0 5մմ հաստ ցինկապատ թիթեղից, զուևակոր ներկվածքով	գծմ	136 5	4589 76	626501 70
132	Ջրնորումիչ ձագարների տեղադրում Փ150մմ	հատ	15	3492 21	52383 09
133	Ջրհոս խողովակների տեղադրում 150x150մմ	գծմ	76 18	4589 76	349647 61
134	Էվակուացիոն աստիճանների մոնտաժում	տն	0 707	848107 09	599611 71
135	Նույնի երկշերտ ներկում ՈՓ-115 էմալով, նախնական մշակումով ԴՓ-021 նախաներկով	տն	0.707	44899 79	31744 15
					81642214.71
Շրջանակային աշխատանքներ					
136	Պատերի բարձրորակ սվաղ գաջի շաղախով	քմ	2484 24	2494 43	6196769 30
137	Պատերի բարելավված սվաղ գաջի շաղախով	քմ	313 02	2494 43	780807 30
138	Ղեկների եւ պատուհանների շեպերի սվաղ գաջի շաղախով	քմ	10 13	3192 87	32350 20
139	V-2, V-4, V-5 փտրամենների վերևի մասի լցափակում գիպտոկարտոնե հարթասալերով	քմ	12 9	6285 97	81089 02
